

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՅ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906ԻՆ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ԳԱՀԻՐԵ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

(ԲԱՐԵԳՈՐԾՈՒԱԾ)

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԳԱՀԻՐԵ

1923

ԱՆՊ

-ԳԱԶԻՐԵ-

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱԲԱՐՈՒԹԻՒ



Գահիրէ, 7 Մայիս 1906

Կանաչախը Տեսր,

Պայիւ ունեցայ ստանալու ձեր Ապրիլ 12 ամսաթիւ նամակը, որով բարեհամած իվ ինձի յղեղ «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒԹՅՈՒՆ» ամուսնք ձեր հիմնած Բարեգործական Ընդհանուր կանոնագրին մեկ օրինակը :

Իրաւունք ունի մտածելու քի Ն. Բ. Խժիլին Կառավարութիւնը ամենատեք բարեցականութեանք միայն կրնար նկատել սյապիսի հասաւութիւն մը, որուն զերազանցորեն եւ բացառակապի մարդասիրական հանգամանքը զոլեսի միայն արժանի է :

Կը շնորհաւուեմ ձեզ որ Հայոց նիւթական եւ բարոյական վիճակին բարելաւման նորածու կը զնուիք, եւ Կառավարութիւնը, անձնալով այդ զործին օգտակարութիւնը, յաջողութիւն կը մաղք ամոր :

Բնդունեցեք, Կանաչախը Տեսր, իմ խորին յարգանիս հաւասարիք :

(Ասոր.) ՄՈՒՍԹԱՅԱ. ՁԵՇՐԵ

Ա.ՍԵՄ. ՊՈՂՈՍ ՓԱՇԱ. ՆՈՒՊԱՐ

» Խ.ԳՈՒԿԱՆ ՓԱՇԱ. ԱՐԹԻՆ

ՀԵՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ. — ՆՊԱՏԱԿ. — ՀԱՆԳԱՄԱՆՔ

ՅՈՒՇՈՒԱԾ 1.

Եղիպտոսի մէջ՝ Վահեմ. Պօղոս փաշա Նուպարի նախածեռնութեամբ հիմնուած է ընկերութիւն մը «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒԹԻՒՆ» անուամբ, որուն նպատակն է՝

ա) Մայր - Հայրենիքին եւ Փոքր - Ասիոյ Հայ ժողովուրդին մուաւոր եւ բարոյական զարգացմանը նպաստել,

բ) անոր նիւթական եւ տնտեսական կացութիւնը բարւորելու աշխատիլ, եւ

գ) այս արդինքը յառաջ բերելու ծառայող որ եւ է ձեռնարկ կամ հրատարակութիւն քաջալերել:

Ընկերութիւնը էապէս մարդասիրական է. որ եւ է քաղաքական հանգամանք չունի: Այս պայմանը հիմնական է:

ԿԵԴՐՈՆ.—ՏԱՐԵՇՐՋԱՆ

ՅՈՒՌՈՒԱԾ 2.

Ընկերութեան կեղբոնք դահիրէ է եւ կեղբոնական Վարչութիւնը Բարիզ կը գտնուի :

Տարեշրջանը կը սկսի ամէն տարուան Յունվարի առաջին օրը :

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՅՈՒՌՈՒԱԾ 3.

Ընկերութեան անդամ՝ ըլլալու համար՝ պէտք է կեղբոնական Վարչ. Ժողովին կամ ստորեւ նշանակուած Մասնաճիւղներէն մէկուն Տեղական Ժողովին խնդրանք ներկայացնել, եւ կամ երկու անդամի կողմէն ներկայացուիլ: Այդ Ժողովը՝ նիստին ներկայ գտնուող անդամներու մեծամասնութեամբ՝ կը քուէարկէ ընդունելութիւնը, յիտագայ 13 րդ Յօդուածին տրամադրութեանց համաձայն:

Այսպէս՝ կարող է անդամակցիլ, առանց սեռի կամ դաւանանքի խորութեան, ամէն հայ որ յանձն կ'առնէ յարգել ներկայ կանոնագիրը եւ կանոնաւորապէս հաստուցանել իր անդամակնարը:

ՄՈՒՏՔԻ ՏՈՒՐՔ.—ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

ՅՈՒՌՈՒԱԾ 4.

Միութեան ամէն անդամ, իր ընդունելութեան ժամանակ, պարտաւոր է վճարել մուտքի տուրք մը, որուն քանակը ինք ազատ է որոշելու, բայց որ 10 եզ. Դրուշէ նուազ չի կրնար ըլլալ: Ասկէ զատ՝ պարտի վճարել նաև ամսական բաժնեզին մը՝ որուն բանակը նմանապէս իր կամքին թողուած է, բայց որ Եգիպտոսի համար 5 եզ. Դրուշէ, եւ ուրիշ երկիրներու համար՝ տեղւոյն դրամական միութեան համեմատ աւելի կամ նուազ համարժէք (*) գումարէ մը պակաս չի կրնար ըլլալ:

(*) Մուտքի տուրքի նուազագոյն սակը՝ 2 շիլին կամ 1/2 տօլար:

Ամսարամնի նուազագոյն սակը՝ 1 շիլին կամ 1/4 տօլար:

Անդամները ազատ են միանուագ վճարել մէկ տարուան ամսական բաժնեգինները :

ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄՆԵՐ.—ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ

ՅՈՒՈՒԱԾ 5.

Ա.—Կեդր. Վարչ. Ժողովը՝ «Բարերար Անդամ»ի տիտղոսը կուտայ այն անձերուն՝ որ մէկ անգամէն գէթ հազար անգլիական ոսկիի նուէր մը կ'ընեն Միութեան :

Բ.—Նոյնպէս «Պատուոյ Անդամ»ի տիտղոսը կուտայ այն անձերուն որ մէկ անգամէն գէթ չորս հարիւր անգլիական ոսկի կը նուիրեն Միութեան :

Բաց ասոի, Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ այդ տիտղոսներէն մին կամ միւսը տալ այն անձերուն՝ որ բացառիկ կամ նշանաւոր ծառայութիւններ կը մատուցանեն Միութեան : Այս որոշումը օրինաւորապէս կրնայ տրուիլ միայն՝ եթէ Կեդր. Վարչ. Ժողովը բաղկացնող անդամներուն առնուազն երեք բառորդին կողմէն ընդունուի :

Իրաւամբ Պատուոյ Անդամ են՝ անդրանիկ Կեդր. Վարչ. Ժողովի անդամները որ Միութիւնը հիմնելու նպաստած են (10 րդ Յօդ.):

ՎՏԱՐՈՒՄ

ՅՈՒՈՒԱԾ 6.

Որ եւ է անդամ, երբ անարժան վարմունք մը ունենայ, Ընկերութեան անդամներու ցանկէն կը ջնջուի Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ՝ նիստին ներկայ գտնուող անդամներու երկու երրորդին մեծամասնութեամբ, յևտագայ 13 րդ Յօդուածին մէջ կանխատեսուած պայմաններու համաձայն :

Իր անդամավճարները կանոնաւորապէս չի հատուցանող որ եւ է անդամ ինքնին կը դադրի Ընկերութեան մաս կազմել :

ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՅՑՆԵՐԸ

ՅՈՒՌՈՒԱԾ 7.

1.— Միութեան հասոյթները կը կազմեն՝

- ա) Մուտքի տուրքերը,
- բ) Ամսական բաժնեգինները,
- շ) Նուիրատուութիւններ,
- դ) Կտակներ,
- ե) Հանգանակութիւններ,
- զ) Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ ստեղծուած ուրիշ ո եւ է հասոյթի աղբիւրներ :

ՀԱՍՈՅՑՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒՄ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

ՅՈՒՌՈՒԱԾ 8.

ՀԱՍՈՅՑՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒՄ

1.— ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

1.— «Հիմնական Դրամագլուխ»ի հաշւոյն պիտի տարուին՝

- ա) մուտքի տուրքերը,
- բ) անդամակնարներու մէկ վեցերորդը,
- շ) զուտ զումարը կամ արժէքը այն բոլոր նուիրատուութեանց եւ կտակներուն որ Հ. Բ. Բ. Միութեան եղած են առանց կանխորոշ նպատակի :

Բնկերութեան Հիմնական Դրամագլուխը անձեռնմխելի է : Այս պայմանը «հիմնական» է : Սոյն Դրամագլուխի գումարները կեդր. Վարչ. Ժողովի կողմէ կը վերածուին պետական կամ ուրիշ առաջնակարգ արժեթուղթներու եւ կամ բաղաքի մէջ հասոյթաբեր անշարժ կալուածներու :

2.— «Մասնաւոր Դրամագլուխ»ի հաշւոյն պիտի տարուի զուտ զումարը կամ արժէքը այն բոլոր նուիրատուութեանց եւ կը տակներուն որ Միութեան եղած են կանխորոշ նպատակով :

Սոյն Մասնաւոր Դրամագլուխի գումարները եւս պիտի վերածուին Հիմնական Դրամագլուխի գումարներուն նման, բացի այն

պարագային երբ նույիրատուները եւ կտակարարները տարբեր կերպով նախասահմանած են :

II.— ՀԱՍՈՅԹՆԵՐ

1.— « Հիմնական Եկանուսներ »

Սոյն հաշւոյն պիտի տարուին՝

ա) անդամավճարներու 5/6 ը,

թ) առհասարակ Հիմնական Դրամագլուխի բոլոր եկամուտները, 10%ը զեղչուելէ յետոյ՝ Պահեստի Հիմնադրամին համար որումասին ստորեւ պիտի խօսուի :

2.— « Մասնաւոր Եկանուսներ »

Սոյն հաշւոյն պիտի տարուին՝

ա) Մասնաւոր Դրամագլուխի հիմնադրամներուն բոլոր եկամուտները,

թ) մէկ մասը կամ՝ ամբողջութիւնը այն նույիրատուութեանց եւ կտակներուն, որ նույիրատուներու եւ կտակարարներու կամքին համաձայն պիտի չի յատկացուին Մասնաւոր Դրամագլուխներու հաշւոյն :

3.— « Արտակարգ Հասոյթներ »

Սոյն հաշւոյն պիտի տարուի հանգանակութեանց եւ ուրիշ ամէն տեսակ արտակարգ հասոյթներու գումարը:

III.— ՊԱՀԵՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հիմնական Դրամագլուխի յատուկ արժեթուղթներու եւ անշարժ կալուածներու պատահական անկումովը յառաջ զալիք բացը գոցելու համար Պահեստի Հիմնադրամ մը պիտի կազմուի, սոյն Դրամագլուխին եկամուտներուն 10%ը մէկ կողմ գնելով :

Նոյն գործողութիւնը պիտի կատարուի նաեւ կանխորոշ նը-պատակաւ եղած զանազան կտակներու եւ նույիրատուութեանց մասին, որոնց պատկան եկամուտներուն վրայէն 10% ը վար կը դրուի, բացի այն պարագային որ նույիրատուները եւ կտակարարները հակառակ պայման դրած ըլլան :

Սլեւս սակայն վար պիտի չի դրուի երբ տեսնուի որ այս Պահեստի Հիմնադրամը յանգած է Դրամագլուխի անձնիւը հաշիւներու արժէքին մէկ հինգերորդին՝ տարեկան հաշուեփակի հիման վրա :

ՀԱՍՈՑԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

IV.— Վերեւ ցոյց տրուած գումարները վար դրուելէ յիսոյ, կանխորոշ նպատակով եղած նուիրատուոթեանց եւ կտակներու Դրամագլուխը եւ եկամուտները կը յատկացուին եւ կը գործածուին նուիրատուներու եւ կտակարարներու կամքին համաձայն :

Հասոյթներու արդիւնքը կը յատկացուի Հ. Բ. Ը. Միութեան . հետապնդած նպատակներուն, վարչական, բրօրականտի եւ այլ ծախքերը զեղչելէ վերջ, Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ որոշուած պիտ-նէի նախատեսութեանց սահմանին մէջ : Սակայն եւ այնպէս այդ ծախքերուն համար անդամավճարներու 5 / 6 էն եւ Մամնաւոր Դր- րամագլուխներու եկամուտներէն վար դրուած սակերը պէտք չէ որ տարեկան յիշեալ կրկին գումարներուն 15 % ը եւ 10 % ը անցնին :

Կեդր. Վարչ. Ժողովը կարող է յաջորդ տարեշրջանին փո- խանցել Հասոյթներու գուտ արդիւնքին մէկ մասը :

ԸՆԿԱԱԳԻՐՆԵՐՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՍՑ

Յ 0 Դ Ո Ւ Ա Ծ 9.

ԸՆԿԱԱՍԳԻՐՆԵՐՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. — Մուտքի տուրքերը, անդամավճարները, նուիրատուու- թիւնները եւ ընդհանրապէս որ եւ է անունով Ընկերութեան վճարելի կամ յանձնելի գումարներ եւ արժեթուղթներ, կրնան օրինաւորա- պէս Ընկերութեան համար պահանջուիլ կամ գանձուիլ եւ կամ ա- նոր վճարուիլ, միմիայն Կեդր. Վարչ. Ժողովի եւ կամ Գործադիր Ժողովի Ատենապետին եւ Գանձապետին, եւ անոնց բացակայու- թեանը, իրենց փոխանորդներուն ասորագրութիւնը կրող ընկալա- գիրներու կամ անդորրագիրներու փոխարէն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՍՑ

Բ. — Ամէն թղթակցութիւն եւ հաղորդակցութիւն հարկ է որ ուղղուի Ընդհ. Քարտուղարին, Միութեան կեդրոնատեղին, Գանձիրէ:

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԷ ԴՐԿՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՑ

Գ. — Զանազան տեղերէ դրկուած բոլոր նուէրները եւ ուեէ

դրամ պէտք է ուղղուին Գանձապետին, Ընկերութեան կեղրոնատեղին՝ Գահիրէ, միմիայն Հ. Բ. Ը. Միութեան անունով կամ հրամանին։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՔՈՂՈՎ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՄ

Յ 0 7 0 1 Ա Ծ 10.

Ա. — Կեդր. Վարչութեան կեղրոնավայրն է Բարիզ։ Առնուազն 9 եւ առաւելն 15 անդամներէ կը բաղկանայ։

Բարիզի առաջին կեդր. Վարչ. Ժողովը կը բաղկանայ ներկայ ցկեանս Նախագահէն եւ նախորդ Կեդր. Ժողովի Եւրոպա բնակող անդամներէն, որ կրնան իրենց ընկեր նշանակել ծեռնիաս անձնաւորութիւններ։

ԾԱ. Ե. — Միութեան առաջին Կեդր. Ժողովը բաղկացած է հետևեալ վարիչ անդամներէն։ —

| | | | | | |
|------------------------|---|---|---|---|--------------|
| ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ, | . | . | . | . | ԱՏԵԼԱՎԵՏ |
| ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ, |) | | | | |
| ԵՐՈՒԱՆԴ ԱԴԱԹՅՆ ՊէՅ | } | | | | ՓՈԽ-ԱՏԵԼԱՎԵՏ |
| Տ. ՎԱՀԱՆ ՄԱԼԻԶԵԱՆ, | . | . | . | . | ԱՏԵԼԱՎԵՏ |
| Տ. ՄԿՐՑԻՉ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ, | . | . | . | . | ԳԱՅՆԱՎԵՏ |
| ԱՌԱԲԵԼ ՊէՅ ՆՈՒՊԱՐ, | | | | | |
| Տ. ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԵԱՆ, | | | | | |
| ԿԱՐԱՊԵՏ ՊէՅ ՇԵՐԻՏՃԵԱՆ, | | | | | |
| Մ. ՄԱՐԿՈՍՈՅ ՊէՅ, | | | | | |

Բ.— Կեդր. Վարչ. Ժողովի նորոգումը մասնակի կերպով տեղի կ'ունենայ երեք տարին անգամ մը, յատենի Ընդհանուր Ժողովի, եւ այնպիսի եղանակաւ որ ամբողջական նորոգումը 9 տարուան մէջ կատարուի:

Սոյն տրամադրութեան կիրարկման գալով, առաջին անգամ Ժողովը հրաժարման կարգը վիճակաւ կ'որոշէ. անդամներու փոխանակումը անգամ մը այսպէս հաստատուելին յետոյ, նորոգումը տեղի կ'ունենայ ընտրութեան առաջնութեան կարգաւ:

Եթզանաւ արտ անդամները միշտ վերընտրելի են:

Ամսական գէթ Ե. Դ. 25 ամսավճար հաստոցանող անդամները միայն կրնան Կեդրոնական Վարչական Ժողովին անդամակցիլ:

Գ.— Ամէն անգամ որ Կեդր. Վարչ. Ժողովը 15 է պակաս անդամներէ բաղկացած ըլլայ՝ կրնայ առժամապէս ընտրել մէկ կամ աւելի անդամներ, մինչեւ որ այդ թիւը ամբողջանայ:

Ընդհանուր Ժողովը, սոյն ընտրութեանց յաջորդող առաջին գումարմանը մէջ, անոնք կը վաւերացնէ եւ կամ ուրիշներ կ'ընտրէ վերջնապէս:

Եռամենայ շրջանի մը միջոցին ընտրուած որ եւ է վարիչ անդամի մը համար, վարչական պաշտօնին իննամենայ տեսողութենէն կը զեղչուի այն ժամանակամիջոցը՝ որ մինչեւ իր ընտրութեան թուականը հոլոված է:

Վարիչ մը փոխանակելու համար ընտրուած որ եւ է վարիչ անդամ պաշտօնին վրայ կը մնայ միայն մինչեւ այն թուականը ուր կը լրանայ իր փոխանակեալին պաշտօնավարութեան պայմանագիրը:

Ատենագրութիւնները պարտին ստորագրուիլ՝ նիստին նախագահող վարիչին եւ նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ վարիչ անդամի մը կողմէ: Ատենագրութիւններէն հանել պէտք եղած ընդորինակութիւնները կամ քաղուածները՝ Կեդր. Վարչ. Ժողովի Ատենապետին կամ Փոխ - Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուած ըլլան:

Դ.— Ընդհանուր Ժողովը Միութեան անդամներուն մէջէն կ'անուանէ 15-30 Խորհրդականներ՝ Եղիպտոս կամ այլուր ընակող:

Խորհրդականները կը նշանակուին հինգ տարուան համար եւ վերընտրելի են: Դադրածներու տեղ Կեդր. Ժողովը կրնայ առժամապէս նորեր նշանակել, որոնց վերջնական ընտրութիւնը յառաջիկայ Ընդհ. Ժողովի վաւերացման կ'ննիթարկուի:

Խորհրդականներուն պաշտօնը պիտի ըլլայ իրենց պատճառաբանեալ կարծիքը յայտնել Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ իրենց ներկայացուած խնդիրներու մասին: Ամէն շանք գործ պիտի դընեն Միութեան անդամներուն աւելնալուն և անոր հասոյթի աղբւըներուն շատնալուն համար: Խորհրդականները պիտի չի կըրնան միջամտել Կեդր. Վարչ. Ժողովի եւ Տեղ. Մասնաժողովներու վարչական գործերուն, սակայն եւ այնպէս Խորհրդականները կըրնան Տեղ. Մասնաժողովներու վարիչ անդամի պաշտօնը եւս ըստանձնել, եւ փոխադարձաբար:

ԵՐԱՇԽԱՌՈՒԹԻՒՆ ՎԱՐԻՉ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ

ՅՕԴՈՒԱԾ 11.

Կեդր. Վարչ. Ժողովի եւ Դործ. Ժողովի իւրաքանչիւր Անդամ պարտաւոր է իր պաշտօնավարութեան իր երաշխիք տալ, դրամով, կամ Կեդր. Ժողովի կողմէ ընդունուած արժեթուղթներով, 100 Անգլ. Ոսկիի գումար մը: Բնդունելի է նաև անշարժ կալուածի մը վրայ տրուած համարժէք երաշխաւորութիւն մը:

Սոյն երաշխաւորութիւնը իրը աւանդ պիտի մնայ Գրէտի Լիօնէի Գահիրէի ճիւղը, մինչեւ որ Ընդհ. Ժողովին կողմէ վարիչ անդամին պաշտօնավարութեան պարտազերծումը հաստատուի:

Իբրև երաշխաւորութիւն տրուած արժեթուղթներուն յաջորդական կտրոնները կը գանձուին իրենց սեփականատիրոջ ծեռքով:

ԴԻՒԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ 12.

Կեդր. Ժողովը ամէն տարի իր անդամներուն մէջէն կ'ընտրէ Ատենապետ մը, երկու Փոխ - Ատենապետ, Ատենադպիր մը եւ Գանձապետ մը:

Վասմ. Պողոս Նուպար վաշա Կեդր. Վարչ. Ժողովի « ցկեան » ատենապետն է:

Եթէ ո եւ է պատճառաւ այդ պաշտօնը թափուր մնայ, Ասենապետը պիտի ընտրուի Կեղը. Վարչ. Ժողովին կողմէ՝ երեք տարուան շրջանի մը համար:

Ժողովը պիտի ունենայ վճարեալ ընդհանուր քարտուղար մը, ինչպէս նաև այլ պաշտօնեաներ՝ երբ անոնց պէտքը զգացուի Միութեան ընդարձակման բերմունքովը:

Ժողովը կրնայ բացառապէս եւ առժամաբար իր անդամներէն մէկուն յանձնել ընդհանուր քարտուղարութեան պաշտօնը:

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

ԳՈՒՄԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ԽՈՐՃՐԴԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 13.

Ա.— Կեղը. Ժողովը կը գումարուի ամէն անգամ որ Միութեան շահերը կը պահանջեն: Գումարումները տեղի կ'ունենան Ատենապետին, կամ անոր բացակայութեանը՝ Փոխ - Ատենապետներէն մէկուն հրաւէրով:

Ժողովը կը գումարուի երբ երեք անդամներ պահանջեն:

Բացակայ վարիչ անդամները կրնան իրենց ծայնը տալ Ժողովի մէկ ուրիշ անդամին:

Բ.— Որպէսզի որ եւ է գումարման մը մէջ տրուած որոշումները օրինական համարուին, պէտք է որ Ժողովին անդամներուն ներկան թիւին գոնէ կէսը ներկայ գտնուի: Առնուազն երեք անդամներու ներկայութիւնը անհրաժեշտ է. միւս անդամները կը ընան ծայներնին իրենց պաշտօնակիցներուն տալ:

Կեղը ունական Վարչական Ժողովի որոշումները՝ ներկայ եւ ներկայացուած անդամներու ծայներուն մեծամասնութեամբը կը տրուին:

Չայներու բաժանման պարագային՝ Ատենապետին ծայնը գերակշիռ է:

Ընտրութեանց պահուն, եթէ նիստին ներկայ գտնուող անդամները բացարձակ մեծամասնութիւն չի կազմեն, երկրորդ քուէ-արկութիւն մը կը կատարուի, եւ այդ պարագային՝ համեմատական մեծամասնութիւնը բաւական կը նկատուի:

Սակայն եւ այնպէս, ոչ մէկ պարագայի մէջ, անդամ մը իր

ձայնէն զատ՝ մէկէ աւելի ծայնի իրաւունք կրնայ ունենալ :

ԿԵԴՐ. ՎԱՐԶ. ԳՈՂՈՎԻ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՈՒՌԱԾ 14.

Ա. — Կեդր. Վարչ. Ժողովը Միութեան վարչութեան եւ գործառնութեանց մասին ամենաընդարձակ հեղինակութեան տէր է:
Մասնաւորապէս ամէն իրաւասութիւն ունի՝

Ընկերութեան նպատակին իրագործման ծառայող ամէն գործ կատարելու : Հիմնելու կամ նպաստով օժտելու վարժարաններ, մատենադարաններ, ընթերցասուններ, արհեստանոցներ, հիւանդանոցներ, խնամատուններ, որբանոցներ, եւ ուրիշ նմանօրինակ հաստատութիւններ :

Օգնելու եւ օժանդակելու ամէն հայու՝ առանց դաւանանքի խորութեան : Հայազգի գիւղացիներուն նպաստելու, անոնց հայթայթելով սերմնցու, կենդանի, գործիք եւ մշակելի հողեր :

Գիւղերու մէջ մշակութեան մասին այժմու գործնական գիւղիքները տարածելու, տեղական արհեստագործութեանց զարգացումին նպաստելու, երկրին պայմաններուն համապատասխան եղանակով աշխատութեան եւ արդիւնաբերութեան նոր միջոցներ ստեղծելու :

Սովէ, հրդեհէ կամ ուրիշ որ եւ է աղէտքէ եւ համաճարակէ արկածիալ վայրերու ընակիներուն օգնութեան հասնելու :

Ընդունելու կամ մերժելու որ եւ է նուիրատուութիւն եւ կտակ :

Ստեղծելու ու է հասոյթի աղբիւր :

Որ եւ է գումար գանծելու եւ վճարումներ կամ ծախքեր ընելու, շարժուն եւ անշարժ որ եւ է ստացուածքի տիրանալու, որ եւ է արժեթուղթներ կամ այլ աւանդ յանձնելու կամ վերստանալու:

Ընկերութեան շահին եւ օգուտին համար՝ որ եւ է շարժուն ու անշարժ կալուած ստանալու կամ ծեռքէ հանելու, որ եւ է փոխանորդագիր յանձնելու կամ որ եւ է փոխիրիտակ (fidéi - commis) հաստատելու, Ժողովին վերապահուելով վարչական բոլոր իրաւունքները՝ այդ կերպով մատակարարուած գոյքերը եւ ստացուածք-

ները ետ առնելու կամ ուրիշներու փոխանցելու, ինչպէս նաև յիշ-
եալ փոխանորդութեանց եւ փոխիրիտակներուն վերջ տալու :

Վերոյիշեալ իրաւասութիւնները բացատրիչ են եւ ոչ թէ
սահմանարկու. մէկ խօսքով՝ Կեդր. Վարչ. Ժողովը ունի բոլոր այն
իրաւունքները որ յատկապէս Ընդհ. Ժողովի վերապահուած չեն :

Կեդր. Վարչ. Ժողովը կարող է իր իրաւասութեանց ամբող-
ցութիւնը կամ անոնց մէկ մասը յանձնել իր անդամներէն երկուքն
կամ երեքն բաղկացած մէկ կամ աւելի Յանձնախումբներու :

Բ.— Ժողովը՝ Գրէտի Լիօնէի Գահիրէի մասնաճիւղին, կամ
անոր չգոյութեանը՝ ուրիշ առաջնակարգ դրամատան մը պիտի
յանձնէ պատրաստ արժեթուղթները կամ բաժնեթուղթները, ինչ-
պէս եւ տրամադրելի գումարները :

Գ.— Ժողովը իր պաշտօնաթերթին մէջ պիտի հրատարակէ
Ընկերութեան տարեկան հաշուեկշխուը, անոր մէկ պատճէնը պի-
տի զրկէ իրաքանչիւր Մասնաճիւղին, եւ Ընդհանուր Ժողովին պի-
տի մատուցանէ ան՝ իր պաշտօնավարութեան տեղեկազրին հետ :

Նմանապէս՝ իր պաշտօնաթերթին մէջ Կեդր. Ժողովը երեք
ամիսը անդամ մը պիտի հրատարակէ Ընկերութեան նոր անդամ-
ներուն ցանկը, անոնցմէ իրաքանչիւրին մուտքի տուրքին եւ բաժ-
նեգիններուն գումարները, ինչպէս ընդունուած նուիրատուութիւն-
ները եւ կտակները :

Դ.— Կեդր. Վարչ. Ժողովի իրաքանչիւր անդամը կրնայ յե-
տագայ Յօդուածին մէջ սահմանուած Մասնաճիւղներու Ժողովսե-
րուն ներկայ գտնուիլ՝ առանց քուէի իրաւունքի :

ԳՈՐԾԱԿԻՐ ՃՈՂՈՎ

ՅՈԴՈՒԱԾ 14 Բ.

Ա.— Գահիրէի մէջ ստեղծուած է Գործադիր Ժողով մը, ո-
րուն անդամները, առնուազն ինը, կ'ընտրուին Կեդր. Վարչ. Ժո-
ղովին կողմէ :

Գահիրէի առաջին Գործադիր Ժողովը կը բաղկանայ նախորդ
Կեդր. Վարչ. Ժողովի Եղիպատոս ընակող անդամներէն :

Գործադիր Ժողովի անդամներուն մէկ երրորդը կը նորոգ-

ուի երկու տարին անգամ մը. նախորդ անդամները վերընտրելի են:

Երբ անդամներուն թիւը պակսի, Կեդր. Վարչ. Ժողովը նոր կը կ'ընտրէ, Գործադիր Ժողովին կարծիքը նախապէս առնելէն վերջ :

Գործադիր Ժողովի անդամները, երբ հիւրաբար Բարիզ կը գտնուին, կրնան ներկայ ըլլալ Կեդր. Վարչ. Ժողովի նիստերուն, սոսկ խորհրդակցական ծայնի իրաւունքով, սակայն իրենց կողմէ ներկայացուցիչ չեն կարող նշանակել:

Բ. — Կեդր. Վարչ. Ժողովը իր իրաւասութեանց մէկ մասը կը փոխանցէ Գահիրէի Գործադիր Ժողովին :

Կեդր. Ժողովի կողմէ յիշեալ մարմնոյն տրուելիք փոխանորդութեան պայմաններուն համաձայն, մասնաւորապէս առաջին Գործադիր Ժողովին գլխաւորագոյն իրաւասութիւնները կրնան ըլլալ հետևեալիները.—

ա) Վարել եւ մատակարարել Միութեան հաստատութիւնները, ծեռնարկները եւ գոյքերը, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ նշանակուած տարեկան նախահաշիւի սահմաններուն մէջ :

բ) Կեդրոնացնել Մասնաճիւղներուն բոլոր հասոյթները, հրակել եկամուտներու գանձումին, կատարել նախահաշիւով նախատեսուած ամէն տեսակ ծախքերը :

գ) Կատարել Տեղ. Մասնաժողովներուն եւ Միութեան հաստատութեանց եւ ծեռնարկութեանց հետ ընթացիկ թղթակցութիւնները:

դ) Անուանել եւ հրաժարեցնել Միութեան եւ հաստատութեանց պաշտօնեաները, բացի Միութեան ընդհանուր քարտուղարէն, որուն անուանումը կը կատարուի Կեդր. Ժողովին կողմէ, Գործադիր Ժողովին կարծիքը առնուելէ վերջ :

ե) Պատրաստել տարեկան նախահաշիւը, որ կ'ենթարկուի Կեդր. Վարչ. Ժողովի վաւերացման :

Գ. — Գործադիր Ժողովը կը գործէ Կեդր. Վարչ. Ժողովի վերին հսկողութեան տակ, որուն պարտի երեք ամիսը անգամ մը ներկայացնել սնտուկի կացութեան վիճակացոյցը, ելեւմուտիդութեամբ, իսկ տարին անգամ մը իր վարչութեան մասին մանրամասն տեղեկագիր մը, տարեկան հաշուեկշիւին հետ միասին :

Դ. — Գործադիր Ժողովը ամէն տարի կ'ընտրէ իր անդամ-

ներուն մէջէն Ատենապետ մը, Փոխ - Ատենապետ մը, Ատենաղը-պիր մը եւ Գանծապետ մը :

13 րդ Յօդուածին տրամադրութիւնները նմանապէս գործադրելի են Գործադիր Ժողովի գումարումներուն եւ խորհրդակցութեանց համար :

ՄԱՍՆԱՇԻՒՂԵՐ

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՆՈՒՑ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

ՅՈԴՈՒԱԾ 15.

Ա. — Մասնաժիւղներու Տեղական Ժողովներ կրնան կազմակերպութիւն կեղր. Վարչ. Ժողովի որոշմամբ՝ այն առմէն տեղեր ուր Միութիւնը ունի գլխ տասը անդամ :

Կեղր. Ժողովը կ'որոշէ ու կը սահմանէ իւրաքանչիւր Մասնաժողովի գործունէութեան շրջանակը : Միշտ եւ հանապազ կարող պիտի ըլլայ ընդարձակել կամ անձկացնել այդ շրջանակը :

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Բ. — Իւրաքանչիւր Տեղական Մասնաժողովի անդամներուն ընտրութիւնը կեղր. Վարչ. Ժողովին վաւերացմանը կ'ենթարկուի :

Տեղական Մասնաժողովներու անդամ կրնան ըլլալ անոնք միայն որ առնուազն Ե. Ղ. 15 կը վճարեն իբրիւ ամսաբաժին : Նորոգումը կեղր. Վարչ. Ժողովին միջոցաւ կը կատարուի, ընտրելիներու կրկնապատիկ ցանկի մը վրայէն, որ կը պատրաստուի նոյն շրջանակին մէջ ամսական առնուազն Ե. Ղ. 15 անդամափնար հատուցանող անդամներէն բաղկացած Անդամական Բնդիհանուր Ժողովի մը կողմէ :

Սոյն Ժողովը կը գումարուի իր Ատենապետին հրաւիրազիրով, իր՝ եւ կամ իր բացակայութեանը՝ Փոխ - Ատենապետին նախագահութեամբ : Յիշեալ Ժողովին մէջ, իւրաքանչիւր անդամ այնչափ ծայն ունի որչափ անգամ Ե. Ղ. 15 կը պարունակէ իր վճարած

ամսաբաժինը։ Եթէ ներկայ անդամներու ծայներով բացարձակ մեծամասնութիւն չի գոյանայ, երկրորդ քուէարկութիւն մը կը կատարուի, եւ այդ պարագային՝ համեմատական մեծամասնութիւնը բաւական կը նկատուի։

Սակայն եւ այնպէս, այն տեղերը ուր ամսաբաժին առնուազն ե. Դ. 15 վճարող անդամներու բաւականաչափ թիւ մը տակաւին գոյացած չէ, Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ արտօնել, բացառաբար եւ առժամապէս, որ աւելի պակաս ամսաբաժին վճարող անդամները կարենան Տեղական Ժողովներուն անդամակցիլ եւ տեղւոյն Ընդհանուր Ժողովին խորհրդակցութեանց եւս մասնակցիլ։

Բացառաբար, Գյանիրէի մէջ, Միութեան Կեդրոնատեղին ըլլալուն, Տեղական Մասնաժողովը կ'ընտրուի, ամէն տարի, Կեդր. Ժողովին կողմէ, որուն ուղղակի կուտայ իր պաշտօնավարութեան համարը։

Գ.— Խրաբանչիւր Մասնաժողովի անդամներու թիւը առնուազն 3 պիտի ըլլայ՝ բատ որոշման Կեդր. Վարչ. Ժողովի։

Վերանորոգումը պիտի կատարուի ներկայ Յօդուածիս Բ. հաստուածին տրամադրութեան համածայն, տարին անգամ մը՝ կիսովին։ Եթէ անդամներու ամբողջական թիւը անզոյգ է՝ առաջին վերանորոգումը կէսէն մէկ պակաս անդամներու համարը ըլլայ։ Վիճակաւ դադրած անդամները վերընտրելի են։

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԴԻՌԱՆՆԵՐԸ

ՅՈԴՈՒԱԾ 16.

Խրաբանչիւր Մասնաժողով իր անդամներուն մէջէն ամէն տարի կ'ընտրէ Ատենապետ մը, Ատենադպիր մը եւ Գանծապետ մը։

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՈԴՈՒԱԾ 17.

Կեդրոնական Ժողովի խորհրդակցութեանց համար 13 րդ Յօդուածին մէջ հաստատուած կանոնները նմանապէս գործադրելի են Մասնաժողովներու խորհրդակցութեանց համար։

Մասնաժողովներու ատենագրութիւնները, նիստին ատենապետող անդամին եւ նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ ան-

դամի մը կողմէ կը ստորագրուին : Ատենազրութիւններէ հանել պէտք եղած ընդօրինակութիւնները կամ քաղուածները՝ ժողովին Ատենապետին կամ Փոխ - Ատենապետին կողմէ պէտք է ստորագրուած ըլլան :

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ՊԱՇՏՈՆԵ

80701ԱԾ 18.

Ա. — Մասնաժողովները, իրենց շրջանակի սահմաններուն մէջ, Միութեան նոր անդամ կը գտնեն, կը ջանան անոնց թիւը աւելցնել, իրենց տրամադրած ամէն միջոցներով անոր ծաւարմանը կ'աշխատին, կը գանձեն մուտքի տուրքերը եւ բաժնեգինները, եւ նուիրատուութեանց գոյացումին ջանադիր կ'ըլլան : Ամէն անգամ որ նոր անդամազրութիւններ եւ նուիրատուութիւններ կ'ըլլան՝ նորընտիր անդամներու եւ նուիրատուներու անունները եւ հասցէնները պարտին ծանուցանել Կեդր. Վարչ. ժողովին, որ անոնք կը հրատարակէ պաշտօնական ցուցակներու միջոցաւ՝ ըստ 14 րդ Յօդ.ի Գ. հատուածի տրամադրութեան : Մուտքի տուրքերը, ամսավճարները, ինչպէս նաև հազար ֆրանքէ նուազ եղող նուէրները, կը գանձուին Մասնաժողովին Ատենապետէն՝ կամ Փոխ - Ատենապետէն՝ եւ Գանձապետէն, իսկ անոնց բացակայութեանը՝ անոնց պաշտօնը առժամաբար վարելու համար Մասնաժողովին կողմէ անուանուած երկու անդամներուն ստորագրութիւննը կրող ընկալագիրներու եւ անդորրագիրներու փոխարէն : Իսկ 1000 ֆրանքէ աւելի նուիրատուութիւնները պէտք է ուղղուին Գանձապետին՝ Ընկերութեան Կեդրոնատեղին, նշանակելով աղբիւը եւ յարակից մանրամասնութիւնները :

Տեղական ժողովները, իրենց շրջանակին մէջ, կրնան՝ իրենց հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ՝ կազմել Օժանդակ Մասնաժողովներ, նաև մասնաւոր եւ առժամանակեայ Յանձնախումբներ, անոնց փոխանցելով իրենց յատուկ իրաւասութիւնները՝ մասամբ կամ ամբողջովին :

Կարող են առաջարկներ ներկայացնել Կեդր. Վարչ. ժողովին, եւ անոնց անդամները կրնան ներկայ գտնուիլ յիշեալ ժողովին նիստերուն՝ երբ Բարիզ գտնուին, առանց սակայն քուէի իրաւունքի :

Բ.— Մասնաժողովները պարտաւոր են կանոնաւոր տոմարակալութիւն մը ունենալ, և Գահիրէ՝ Ընկերութեան կեղոնաւոնդին զրկել գոյացած դրամները:

Իրաւունք չունին գործածելու ոչ մէկ գումար՝ բացի մանր պէտքերու համար հարկաւոր եղած ծախքերէն, ասոնց ամբողջութիւնը անդամավճարներուն 15 % ը չանցնելու պայմանաւ:

Գ.— Իւրաքանչիւր վեցամսեայի վերօք, պարտաւոր են Կեդր. Վարչ. Ժողովին զրկել իրենց հաշիւները՝ իրենց շրջանակին վերաբերեալ ամէն խնդիրներու մասին պատրաստուած տեղեկագրի մը հետ:

Դ.— Կեդր. Վարչ. Ժողովին առանց նախապէս արտօնութիւն ստանալու՝ չն կարող ընել որ եւ է ծախք, կամ որ եւ է որոշում տալ եւ յանձնառութիւն մը կնքել: Պարտաւոր են ամենայն նշդութեամբ համակերպիլ Կեդր. Վարչ. Ժողովի որոշումներուն, որ իրաւունք ունի Մասնաժողովներու անդամները հրաժարեցնելու՝ երբ անոնք պարտազանց գտնուին, եւ անոնց տեղ առժամեայ յաջորդներ կարգելու, մինչեւ որ վերոգրեալ 15 րդ Յօդուածի մէջ նշանակուած եղանակաւ վերջնական ընտրութիւն կատարուի:

Ե.— Յօդուած 14 Բ. ի տրամադրութեանց համածայն Գործ. Ժողովը կը կատարէ 15, 16, 17 եւ 18 րդ Յօդուածներով Կեդր. Ժողովի վերապահուած բոլոր աշխատութիւնները եւ գործողութիւնները:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴՐՁԱՆԱԿԸ

ՅՈՒՌԱԾ 18 Բ.

Հ. Բ. Բ. Միութիւնը Սմերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ ունի մամնաւոր կազմակերպութիւն մը հետեւեալ տրամադրութիւններով:

Ա.— Սմէն տարի կը գումարուի Խորհրդակցական Համաժողով մը որուն վայրը կ'որոշուի նախորդ Համաժողովի կողմէ: Համաժողովը կը բաղկանայ Միացեալ Նահանգներու բոլոր Մասնաժիւղներուն կողմէ ընտրուած պատուիրակներէն. իւրաքանչիւր Մասնաճիւղ կը նշանակէ այնքան պատուիրակ որքան անգամ 50 անդամ ունի, պայմանաւ որ մէն մի Համաժողովի համար անոնց թիւը հինգէն աւելի ըլլայ:

Սմերիկայի Խորհրդակցական Համաժողովը կ'ընտրէ իր Ատե-

նապետը եւ իր դիւանը : Որոշումները կը տրուին ծայներու մեծամասնութեամբ : Զայներու բաժանման պարագային, Ատենապետին ծայնը գերակշու է :

Սոյն Համաժողովը կ'ընտրէ Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովին անդամները : Կը լսէ Կեդր. Յանձնաժողովին տեղեկագիրը. կը խորհրդակցի այն խնդիրներու մասին որ Կեդր. կամ Գործ. Ժողովի կողմէ իրեն կը յանձնուին եւ անոնց կ'ենթարկէ այն ամէն առաջարկութիւնները որ կը սատարեն Հ. Բ. Բ. Միութեան քարգաւաճման Ամերիկայի մէջ : Խորհրդակցական Համաժողովը Միացեալ Նահանգներու համար կը մշակէ նախահաշխի ծրագիր մը՝ զոր կ'ուղարկէ Գահիրէի Գործադիր Ժողովին, միացուելու համար ընդհանուր նախահաշխի ծրագրին որ իր կարգին կը ներկայացուի Կեդր. Վարչ. Ժողովին վաւերացման :

Բ. — Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովը կը կազմուի առնուազն 7 եւ առառաւելն 11 անդամներէ : Կ'ընտրուի Ամերիկայի Խորհրդակցական Համաժողովին եւ ամէն տարի իր անդամներուն կէսը կը վերանորոգուի : Իր անդամներուն մէջէն կ'ընտրէ Ատենապետ մը, Փոխ-Ատենապետ մը, Ատենապետ մը : Գանձապետ մը :

Այս անուանումները պարտին վաւերացուիլ Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ :

Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովը իր մօտ կը կեդրոնացնէ Շրջանակային Յանձնախումբներու եւ Մասնաճիւղներու հաշուակալութեան եւ գանձապահութեան վերաբերեալ բոլոր թղթակցութիւնները եւ բոլոր գործառնութիւնները : Ուղղակի պատասխանատու է Կեդր. Վարչ. Ժողովին Գահիրէի Գործադիր Ժողովին : Անկա պարտաւոր է, ամէն տարի, Գործադիր Ժողովին ներկայացնել Միացեալ Նահանգներու մէջ Միութեան գործունէութեան մասին մահրամատն տեղեկագիր մը, իր, Մասնաճիւղներու եւ Շրջ. Յանձնախումբներու հասոյթներուն եւ ծախքերուն հաշուեցոյցներով, ինչպէս նաև Խորհրդակցական Համաժողովի, Կեդր. Յանձնաժողովի, Շրջան. Յանձնախումբներու, եւ բոլոր Մասնաժողովներու ընտրութեանց եւ անուանումներու ցուցակներով :

Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովը պարտաւոր է Գահիրէի Գործ. Ժողովին կամ Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ այդ նպատակաւիքը պատուիրակ կարգուած ելմտական ներկայացուցիչն յանձ-

նեկ բոլոր հասոյթի գումարները, ծախքերը զեղչելէ վերջ, առ առաւելն ամէն եռամսեալի վերջը :

Գ.— Ամերիկայի Խորհրդակցական Համաժողովը կրնայ որոշել Շրջանակային Յանձնախումբներու և Շրջանակային Համաժողովներու կազմութիւնը : Այս Յանձնախումբները առ նուազն 5 եւ առ առաւելն 7 անդամներէ կը բաղկանան եւ կ'ընտրուին Շրջանակային Խորհրդակցական Համաժողովներու կողմէ, որոնց անդամները շրջանակին Մասնաճիւղներէն կը նշանակուին ստորեւ ցոյց տրուած կանոններուն համաձայն : Շրջանակային Խորհրդակցական Համաժողովները եւ Շրջանակային Յանձնախումբները կը վարուին այն միեւնոյն օրէնքներով որ հաստատուած են Ամերիկայի Խորհրդակցական Համաժողովին եւ Կեդր. Յանձնախումբին համար բայց իրենց իրաւասութիւնը սահմանափակուած է իրենց շրջանակին մէջ : Շրջ. Յանձնախումբները ուղղակի պատասխանատու են Ամերիկայի Կեդր. Յանձնախումբին եւ անոր հետ կը յարաբերուին :

Խորհրդակցական Համաժողովը կրնայ որոշել Շրջանակային մէկ կամ աւելի Յանձնախումբներու ջնջումը : Շրջանակային Յանձնախումբին ջնջումին հետեւանքով անօգուտ կը դառնայ այլեւս Շրջանակային Համաժողովին գումարումը :

Գ.— Կեդր. Յանձնախումբի, Շրջանակային Յանձնախումբներու եւ Ամերիկայի Խորհրդակցական Համաժողովի անդամները միշտ վերջնտրելի են :

Ե.— Մասնաժողովները կ'ընտրուին, կը վաւերացուին եւ կը գործեն ներկայ Կանոնագրին տրամադրութեանց համաձայն : Կը թղթակցին Շրջանակային Յանձնախումբներու հետ, որոնց կ'ննթարկեն իրենց հաշիւները եւ կը յանձնեն իրենց դրամները : Շրջանակային Յանձնախումբի չգոյութեան պարագային, Մասնաժողովները կը յարաբերուին Ամերիկայի Կեդր. Յանձնախումբին հետ:

Կեդր. Յանձնախումբի կրնայ Ամերիկա բնակող ո եւ է անդամի մը անուան ջնջումը առաջարկել Կեդր. Վարչ. ժողովին, որ այս մասին վերջնականօրէն կը վճռէ :

Զ.— Այն պարագային որ Կեդր. Վարչ. ժողովը յարմար դատէ Միացեալ Նահանգներու մէջ ատեղծել Խորհրդականներու Յանձնախումբ մը, որուն պաշտօնը ըլլայ մասնաւորապէս Միութիւնը

ներկայացնել, Ամերիկայի Բարեգործական Հաստատութեանց մօտ, եւ կամ ուրիշ ու եւ իցէ Յանձնախումբ մը, նախապէս Կեդր. Յանձնաժողովն կ'ուզէ անուններու եռապատիկ ցանկ մը, որուն մէջէն կ'ընտրէ անդամները :

Խորհրդականներու Յանձնախումը կը գործէ Կեդր. Յանձնաժողովին հետ համախոհաբար, Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ տրուած ուղղութեանց համաձայն :

Է. — Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ նշանակել Կեդր. Յանձնաժողովի մօտ ելմտական Պատուիրակ մը որ պաշտօն պիտի ունենայ ինքը տեղեակ պահելու Միութեան Ամերիկայի մէջ ունեցած գործունէութեան վերաբերեալ ամէն տեսակ ելմտական խնդիրներու մասին եւ ստանալու Կեդր. Յանձնաժողովի մօտ գտնուած գումարները՝ անոնք յանձնելու համար Միութեան Կեդր. Մնտուկը :

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ անուանել նաեւ մասնաւոր Պատուիրակ մը որուն պաշտօնը պիտի ըլլայ աշխատակցիլ Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովին հետ Միութեան բրօբականութիւն գործին համար :

Այս երկու պատուիրակները իրաւունք չունին միջամտելու Կեդր. Յանձնաժողովի վարչական խնդիրներուն մէջ :

Ը. — Ելմտական Պատուիրակի եւ Կեդր. Յանձնաժողովի անդամի պաշտօններուն միջեւ անհաշտութիւն չի կայ :

Ամերիկայի Խորհրդակցական Համաժողովը Ներքին Կանոնագիր մը կը պատրաստէ նախագծելով Կեդր. Յանձնաժողովին, Համաժողովներուն, Շրջանակային Յանձնախումբներուն եւ Մասնաժողովներուն պաշտօնավարութիւնը : Սոյն Ներքին Կանոնագիրը, որ պէտք չէ պարունակէ ներկայ Կանոնագրին հակառակ ո եւ է տրամադրութիւն, գործադրութեան կը դրուի Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ վաւերացուելէ յետոյ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՈՒՆԻԱԾ 19.

Ա. — Ընդհանուր Ժողովը Միութեան անդամներուն ընդհանրութիւնը կը ներկայացնէ : Ընկերութեան բոլոր շահերուն մա-

մին գերիշխանօրէն կը տնօրինէ : Իր որոշումները պարտաւորիչ են ամէնուն, նոյն իսկ բացականերուն եւ տարակարծիքներուն համար:

Բ.— Ընդհանուր ժողովի մասնակցելու համար գոնէ տարիէ մը իվեր անդամ եղած եւ այդ միջոցին ամսական առնուազն Ե. Ղ. 25 յարատեւաբար հատուցած ըլլալու է : Սակայն եւ այնպէս՝ ինչպէս որ ներկայ յօդուածիս Զ. հատուածին մէջ ըստած է, առաջին Ընդհանուր ժողովին ներկայ գտնուելու համար՝ որ երրորդ տարուան վերջը տեղի պիտի ունենայ՝ բաւ է 2 րդ եւ 3 րդ տարիները միայն վճարած ըլլալ : Իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի այնչափ ծայնի որչափ անգամ Ե. Ղ. 25 կը պարունակէ իր ամսավճարը :

Իւրաւամբ Ընդհանուր ժողովի անդամ են՝ Տեղ. Մասնաժողովներու անդամները, ինչպէս նաև Բարերար եւ Պատուոյ անդամներ՝ որոնց մասին խօսուած է 5 րդ Յօդուածի մէջ : Բացի այն ծայներէն՝ զոր կրնան ունենալ իբրեւ բաժնեվճար անդամ, Բարերար Անդամներէն իւրաքանչիւրը 10 ծայնի, իսկ Պատուոյ Անդամներէն իւրաքանչիւրը 4 ծայնի իրաւունք ունի : Սակայն անդամ մը, ոչ մէկ պարագայի մէջ, իր ունեցած ծայներն ալ մէջը ըլլալով 20 ծայնէ աւելի չի կրնար ունենալ ալ :

Ընդհանուր ժողովի մասնակցելու իրաւունք ունեցող որ եւ է անդամ կրնայ իր տեղը ներկայացուցիչ կարգել՝ այդ իրաւունքը անձնապէս ունեցող ուրիշ որ եւ է անդամ մը : Ներկայացուցիչը իր ծայներէն զատ՝ կ'ունենայ իր փոխանորդեալին ծայներն ալ :

Փոխանորդագիրներու ստորագրութիւնը պարտի վաւերացուած ըլլալ օրինական ձեւակերպութեամբ, եւ կամ Գործադիր ժողովի կամ Տեղական Մասնաժողովին Ատենապետին եւ կամ ՓոխԱտենապետներէն մէկուն կողմէ :

Գ.— Ընդհանուր ժողովը կը գումարուի Դահիրէ, Բարիզ կամ այլուր, ըստ Կեղը. Վարչ. Ժողովի որոշման, օրակարգի խնդիրներուն ամփոփումը պարունակող հրաւիրագրով մը, որ Կեղը. Վարչ. ժողովի կողմէ կը հրատարակուի Միութեան պաշտօնաթերթին մէջ, գումարման համար որոշուած օրէն երեք ամիս առաջ, իսկ ստիպողական բացառիկ պարագայի մէջ՝ առնուազն երեսուն օր առաջ :

Դ.— Անոր կը նախագահէ Կեղը. Վարչ. ժողովի Ատենապետը, իսկ անոր բացակայութեան՝ Փոխ - Ատենապետներէն մին կամ Ատենապետի պաշտօնը կատարող վարիչ անդամը :

Ատենապետը կ'անուանէ Ատենադպիրը։ Քուէախոյզ կը նըռ շանակուին ամենէն աւելի ծայս ունեցող եւ այդ պաշտօնը յանձն առնող երկու անդամներ։

Ե. — Կեդր. Վարչ. Ժողովի կողմէն պատրաստուած օրակարպին մէջ նշանակուած խնդիրներէն զատ՝ ուրիշ նիւթերու վրայ կարելի չէ խորհրդակցիլ։

Ընդհանուր Ժողովի ատենագրութինները կը ստորագրուին՝ վերոյիշեալ կերպով կազմուած դիւանի անդամներէն։ Ատենագրութիւններէն հանել պէտք եղած ընդօրինակութիւնները կամ քաղուածքները, Կեդր. Վարչ. Ժողովին Ատենապետին եւ կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուին։

Զ. — Ընդհանուր Ժողովը կը գումարուի կանոնաւորապէս ամէն տարեշրջանի առաջին եռամսիային։

Լսելու համար Կեդր. Վարչ. Ժողովին տեղեկագիրը Ընկերութեան կացութեան մասին, եւ ընդունելու համար բոլորուած տարեշրջանին հաշիւնները, որ նախապէս՝ Ժողովին գումարումէն 15 օր առաջուընէ սկսեալ անդամներու արամադրութեան տակ դրուած ըլլալու են Միութեան Կեդրոնին մէջ։

Ներկայացուած հաշիւնները վաւերացնելու կամ ուղղելու համար։

Երբ հարկ ըլլայ՝ վարիչներուն ընտրութիւնները կատարելու համար։

Եւ տնօրինութիւններ ընելու համար որ եւ է բացառիկ կարեւորութիւն ունեցող խնդիրներու մասին՝ որ հրաւիրագրին մէջ նշանակուած օրակարգին մաս կը կազմին։

Ե. — Վերոգրեալ խնդիրներէն զատ, Ընդհանուր Ժողովին անկ է կանոնագրին վրայ ըլլալիք փոփոխութիւններուն, յաւելումներուն, կամ յապաւումներուն մասին որ եւ է որոշում տալ, մասնաւորաբար՝

ա) Ընկերութեան նպատակը կազմող առարկաներէն մէկուն ընդարձակումը, սեղմումը, բարեփոխումը կամ ծեւափոխումը, առանց սակայն եւ այնպէս ո եւ է պարագայի մէջ՝ փոփոխելու կամ խաթարելու իր ընդհանուր նպատակը եւ իր հիմնական պայմանները (Յօդուած 1 եւ 8)։

բ) Ընկերութեան անուան ծեւափոխումը կամ այլափոխումը, պայմանաւոր որ այդ փոփոխութիւնը՝ ընդհանուր նպատակին եւ հիմնական հանգամանքին որ եւ է այլայլում կամ մնաս չի պատճառէ եւ ենթադրել իսկ չի տայ.

զ) Ընկերութեան որ եւ է եղանակաւ ծուլումը՝ համանման կամ նոյնատեսակ ուրիշ ընկերութեան մը հետ, եւ կամ վերջապէս Ընկերութեան կազմալուծումը :

Վերոգրեալ պարագաներուն թուումը լոկ բացատրիչ է եւ ոչ թէ սահմանափակող :

Հ.— Վերեւ (ա) (թ) եւ (զ) հատուածներով թուարկուած պարագաներուն մէջ, ժողովին խորհրդակցութիւնները այն ատեն միայն օրինական կ'ըլլան, երբ ներկայ եւ ներկայացուած անդամները՝ Ընդհանուր ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն առնուազն կէսը կը կազմին, եւ որոշումը օրինական ըլլալու համար՝ պէտք է ընդունուի մեծամասնութենէ մը, որ ներկայ եւ ներկայացուած անդամներուն գէթ երեք բառորդը ներկայացնէ : Այսուհանդերձ, եթէ նիստին մէջ Ընդհ. ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն կէսը անձամբ ներկայ չէ, ժողովը կրնայ՝ վերոյիշեալ մեծամասնութեամբ՝ առժամանակեայ որոշում մը տալ: Այդ պարագային, նոր Ընդհանուր ժողով մը կը գումարուի՝ երկու շաբաթուան նուազագոյն ժամանակամիջոցի մը մէջ, ընդունուած առժամեայ որոշումը պարունակող նոր ազգագրով մը, եւ այդ որոշումը վելիջնական կ'ըլլայ, եթէ նորոգ գումարման մէջ ներկայ եւ ներկայացուած անդամներուն ծայներուն երեք բառորդին կողմէ ընդունուի. բաւական է որ ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն գոնէ մէկ բառորդը՝ այդ նիստին ներկայ ըլլայ կամ ներկայացուցիչ ունենայ :

Ուրիշ որ եւ է պարագայի մէջ, Ընդհ. ժողովը՝ թէ տարեկան եւ թէ արտակարգ նիստ գումարուելուն՝ վաէերական կերպով խորհրդակցած կ'ըլլայ, եթէ ներկայ եւ ներկայացուած անդամներուն թիւը գոնէ մէկ հինգերորդը ըլլայ՝ Ընդհանուր ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն թիւին. իսկ որոշումները կը տրուին ծայներու մեծամասնութեամբ: Եթէ այդ օրինական թիւը չի գոյանայ, երկրորդ նիստ մը կը գումարուի եւ

փաւերական կերպով կը խորհրդակցի՝ ինչ որ ալ ըլլայ ներկայ անդամներուն թիւը :

Ըստրութեանց պարագաներուն մէջ, եթէ բացարձակ մեծամասնութիւն չի կայանայ, երկրորդ քուէարկութիւն մը կը կատարուի եւ այն ատեն համեմատական մեծամասնութիւնը բաւարար կը նկատուի :

Թ. — Կեդր. Վարչ. Ժողովը պարտաւոր է տարեկան գումարման օրակարգը անցընել այն առաջարկութիւնները, որ այս նպատակով իրեն ներկայացուած են նոյնմբեր ամիսէն առաջ՝ Ընդհանուր ժողովի մասնակցելու իրաւունք ունեցող եւ գէթ յիսուն ծայնի ամբողջութիւն մը ներկայացնող առնուազն հինգ անդամներու խումբի մը կողմէ :


ԿԱԶՄԱԼՈՒՄ

ՅՈՒՐԻԱԾ 20.

Կազմալուծման պարագային՝ օրուան Ընդհանուր ժողովը պէտք եղած որոշումը պիտի տայ դրամի գործածութեան եւ գոյքերու տնօրինութեան մասին, Կանոնագրիս Յօդ. 1 ով սահմանուած նպատակին համեմատ :

Իր յարմար դատած կերպով պիտի կրնայ որոշել վերոյիշեալ դրամին եւ ինչքերուն միշտ միեւնոյն նպատակին համար յատկացումը կամ փոխանցումը :

Մասնաւոր նպատակներու համար եղած նուիրատուութիւններէ եւ կտակներէ գոյացած եկամուտները՝ պիտի գործածուին ըստ առաջնոյն նուիրատուներուն եւ կտակարարներուն կանխորոշած նպատակին :



ՀԻՄՆԱԳԻՐ

Այօր, 15 Սպրիլ 1906, Ա. Զատկի առաջին օրը, սուրագրեալներս՝ համախմբուած Գահիրէ, Վանմ. Պողոս Փաշա Նուպարի բնակարանը, կազմեցինք ընկերութիւն մը

ՀԱՅԱԿԱՆ ԲՈՐԵԴՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԱԹԻՆ


անուամբ, համաձայն ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆց եւ պայմաններուն ներկայ Կանոնագրիս՝ որ կը կրէ այսօրուան քուականը եւ մեր սուրագրութիւնները։

Ընկերութեանս առաջին Վարչական Ժողովը բաղկացած է՝ Կանոնագրին 10 րդ Յօդուածին մէջ նշանակուած տասը անդամներէն, եւ այսօրուընէ Ընկերութիւնս կազմակերպեալ հռչակուած է։

Գահիրէ, 15 Սպրիլ 1906

(Ստորագր.)

| | |
|--------------------|--------------------|
| ԵԱԳՈՒԹ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ | ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ |
| ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱՋՈՆ ՊԵՅ | ԱՌԱՔԵԼ ՆՈՒՊԱՐ ՊԵՅ |
| Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ | ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ |
| Մ. ՄԱՐԿՈՍՈՖ ՊԵՅ | ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԵԱՆ |
| Կ. ՇԷՐԻՏՃԵԱՆ ՊԵՅ | Յ. ՅԱԿՈԲԵԱՆ |



ԾԱՆ. — Ներկայ Կանոնագիրը կրած է զանազան բարեկիոյուն-
քիւններ Միութեան Ընդհանուր ժողովի 23 Մայիս 1909, 8
Մայիս 1910, 17 Ապրիլ 1911, 29 Ապրիլ 1912, 11 Փետրվար
1921, 13 Մայիս 1921 և 10 Նոյեմբեր 1922 ի հիմքերուն մէջ :



ԾԱՆ. — Սոյն Կանոնագիրը Օսմ. Կառավարութեան
ներկայացուած ըլլալով, 131 թիւ և 3 Մարտ 1910
քուականաւորինական «իշխուխապէր» ըսացուած է :

Սոյն Կանոնագիրը Միութեան սեփական Տպարանին մէջ
վերատպուած է 20 Փետրվար 1923 ին :

